«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ»
ուսանողական և աշակերտական Հանրապետական օլիմպիադա
2000

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ, ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ ԱՆԱՎԱՆ ՃԵՄԱՐԱՆ - ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ	
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝	ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ, “ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ” ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ՝	ՎԱՐՈՒԺԱՆ ԵՎ ՏԻՐՈՒՀԻ ԲՈՒՐՄԱՅԱՆՆԵՐԻ

Նպատակը

Բարձրացնել երիտասարդության իրավագիտակցությունը, նրանց տալ անհրաժեշտ գիտելիքներ՝ մարդու իրավունքների և ազատությունների, դրանց պաշտպանության երաշխիքների ու կարգի մասին, հաղորդակից դարձնել իրավական, ժողովրդավարական պետության բնորոշ գծերին, օգնել ճանաչելու Սահմանադրությունն ու սահմանադրական արդարադատության համակարգը, պատկերացում կազմել մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի մասին:

Կազմակերպման ձևը և կարգը

Դպրոցներում՝ վիկտորինայի և գիտելիքների բանավոր ստուգման կազմակերպում (զրույց):
Մարզերում և բուհերում՝ օլիմպիադայի անցկացում:
Ամփոփիչ փուլում՝ գործնական խաղեր (մասնավորապես, դատավարության կազմակերպում, որտեղ աշակերտները հանդես կգան որպես կողմեր, իսկ ուսանողները՝ դատավորներ):
Նախատեսվում է միջոցառումն անցկացնել 4 փուլով:

- մարզկենտրոններում, Երևանում (4 փնջով) և Ստեփանակերտում հրավիրվում են դպրոցների մեկական ուսուցիչ, ովքեր դասավանդում են իրավունքի հիմունքներ: Նրանց համար հատուկ ծրագրով կազմակերպվում է սեմինար և տրամադրվում անհրաժեշտ գրականություն, այդ թվում՝ "Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան" - 10000 օրինակ: Ուսուցիչներին ցույց է տրվելու նաև մեթոդական օգնություն՝ դպրոցներում վիկտորինա ու գիտելիքների բանավոր ստուգում կազմակերպելու համար,
- անցկացվում է մարզային, իսկ Ստեփանակերտում՝ հանրապետական օլիմպիադա՝ յուրաքանչյուր դպրոցից երկուական աշակերտի մասնակցությամբ: Օլիմպիադայի արդյունքներով ձևավորվում է մարզային, Երևանի 4 և ԼՂՀ աշակերտական թիմեր՝ 8 աշակերտի կազմով (6-ը հիմնական անդամ և 2-ը՝ փոխարինող),
- անցկացվում է բուհական օլիմպիադա (առանձին ծրագրով) և ձևավորվում է ուսանողական 15 թիմ՝ 7-ական ուսանողի կազմով (5-ը հիմնական անդամ և 2-ը՝ փոխարինող),
- ամփոփիչ փուլում, Անանիա Շիրակացու անվան ճեմարանի (գիտակրթական համալիր) բազայի վրա, կազմակերպվում է 15 դատավարություն, որտեղ վիճակահանությամբ աշակերտական թիմերը հանդես կգան որպես դիմող և պատասխանող կողմեր, իսկ ուսանողական թիմերը՝ որպես դատարան: Ճեմարանի աշակերտներից կձևավորվեն դատարանների աշխատակազմերը:

<u>Արդյունքների գնահատման և ամփոփման կարգը</u>
Յուրաքանչյուր փուլում արդյունքների ամփոփումը կիրականացվի տեստային համակարգի և հատուկ հանձնախմբերի միջոցով: Տեստերը և վիրտուալ օրենքները կմշակվեն սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից: Հատուկ հանձնախմբերը կձևավորի կազմկոմիտեն:

<u>Աշխատանքների կազմակերպման պատասխանատուն</u>

Աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը դրվում է կազմկոմիտեի վրա: Տեղեկատվական հեռախոսներն են՝ 58-81-89, 58-81-20 կամ 52-99-91:

Արդյունքների գնահատման և խրախուսման կարգը

- դպրոցներում լավագույնը ճանաչված աշակերտներին տրվում է գրքերի փաթեթ և ՀՀ սահմանադրական իրավունք կենտրոնի պատվոգիր,
- մարզերում հաղթող ճանաչած աշակերտներին տրվում է գրքերի փաթեթ և ՀՀ սահմանադրական իրավունք կենտրոնի Պատվո վկայական, երկու տարով
սահմնադրական դատարանի տեղեկագրի անվճար բաժանորդագրման իրավունք,
- հանրապետական փուլում հաղթող կարող են ճանաչվել՝
    ա) դիմող կողմ - 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով,
    բ) պատասխանող կողմ - 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով,
    գ) դատարան - 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով:

Յուրաքանչյուր թիմի և նրա անդամների համար սահմանվում են հետևյալ մրցանակները.

- հաղթողի դիպլոմ՝ թիմի յուրաքանչյուր անդամին,
- լավագույն ճանաչված թիմերին՝ ՀՀ սահմանադրական դատարանի հատուկ մրցանակ,
- լավ ճանաչվածներին՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խրախուսական մրցանակ:

Հաղթողներին կտրվեն նաև կազմակերպիչների կողմից սահմանված այլ անհատական և խրախուսական մրցանակներ:

Միջոցառման ֆինանսական ապահովումը

Միջոցառումների նյութական և ֆինանսական ապահովումը ստանձնում են կազմակերպիչները և հովանավորը:

Միջոցառման իրականացման ժամանակացանկը

- **առաջին փուլ՝ մինչև 15.02.2000թ.,**
- **երկրորդ փուլ՝ փետրվար - մարտ 2000թ.,**
- **երրորդ փուլ՝ ապրիլ 2000թ.,**
- **չորրորդ փուլ՝ մայիս 2000թ.:**

Նախատեսվում է մասնակիցների ընդհանուր թիվը հասցնել 20 000-ի:

“Սահմանադրություն և իրավունք”
Երկրորդ օլիմպիադայի մասնակիցների ցուցակ
2000թ.

Հանրապետական օլիմպիադայի փուլ դուրս են եկել
14 աշակերտական թիմ՝

1. **“Դավիթաշեն”**
2. **“Վարդանանք”**
3. **“Էլիտա”**
4. **“Շիրակացու ճեմարան”**
5. **“Շենգավիթ”**
6. **“Շիրակ”**
7. **“Արմավիր”**
8. **“Գեղարքունիք”**
9. **“Վայոց ձոր”**
10. **“Այրարատ” (Արարատի մարզ)**
11. **“Լոռի”**
12. **“Աշտարակ” (Արագածոտնի մարզ)**
13. **“Գոյամարտ” (Արցախ, Ստեփանակերտ)**
14. **“Վանաձոր” (Լոռու մարզ)**

և 7 ուսանողական թիմ՝

1. **“Արցախ”**
2. **“Հրաչյա Աճառյան” համալսարան**
3. **“Գալիք” համալսարան**
4. **“Նոր Գլաձոր” (Գլաձոր կառավարման համալսարան)**
5. **“Էրեբունի” (ԵՊՀ)**
6. **“Իրավունք և օրինականություն” (ԵՊՀ)**
7. **“Սլավյանի” (Երևանի ռուս-հայկական պետական համալսարան)**

“ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ”
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
Օլիմպիադայի կազմկոմիտե

Նախագահ
Վոլոդյա Հովհաննիսյան - ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ

Անդամներ՝
1. Աշոտ Ալիխանյան - “Անանիա Շիրակացի” գիտակրթահամալիրի տնօրեն
2. Արա Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության դպրոցների վարչության պետ
3. Անահիտ Խաչատրյան - “Անանիա Շիրակացի” գիտակրթահամալիր
4. Վլադիմիր Կարմիրշալյան - Ժողովրդավարության և մարդու իրավունքների ազգային կենտրոնի տնօրեն
5. Արա Կուբանյան - ՀՀ ՍԴ բաժնի վարիչ, ՀՀ ՍԻԿ գործադիր տնօրենի տեղակալ
6. Առուշան Հակոբյան - ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար, ՀՀ ՍԻԿ գործադիր տնօրեն
7. Գագիկ Ղազինյան - ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան

“ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ” ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Հանրապետական փուլի ժյուրիի կազմը

Նախագահ
Ալվինա Գյուլումյան - ՀՀ սահմանադրական դատարանի անդամ
Նախագահի տեղակալ
Արմեն Զալինյան - ՀՀ սահմանադրական դատարանի իրավաբանական ծառայության ղեկավար
Անդամներ՝
1. Առաքել Գյուլբուդաղյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի գլխավոր մասնագետ
2. Արա Կուբանյան - ՀՀ ՍԴ բաժնի վարիչ, ՀՀ ՍԻԿ գործադիր տնօրենի տեղակալ
3. Վիգեն Քոչարյան - ԵՊՀ սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս

Հյուրեր

ԱԼԻԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ	“Անանիա Շիրակացի” գիտակրթահամալիրի տնօրեն
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ	“Անանիա Շիրակացի” գիտակրթահամալիր
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱ	ՀՀ կրթ.և գիտ. նախ. դպրոցների վարչության պետ
ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ	Ժողովրդավար. և մարդու իրավ. ազգ. կենտր.

	տնօրեն
ՂԱԶԻՆՅԱՆ ԳԱԳԻԿ	ԵրՊՀ իրավաբանական Ֆեկուլտետի դեկան
ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻԴԱ	“Օլիմպիադա” հաս. կազմակերպության ղեկավար
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԻԿՏՈՐ	ՀՀ կրթ.և գիտ. նախ. բարեփոխումների կենտրոնի ղեկ.
ՔՈՉԱՐՅԱՆ ՎԻԳԵՆ	ԵրՊՀ սահմանադր.և միջազգ. իրավ.ամբիոնի դասախոս
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՎԱԳ	“ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ” Համալսարանի ռեկտոր
ՋՀԱՆԳԻՐՅԱՆ ԺՈՐԱ	“ԳԼԱՁՈՐ” Կառավարման համալսարան ռեկտոր
ԽԱՌԱՏՅԱՆ ՖՐՈՒՆԶ	“ԳԱԼԻՔ” Համալսարանի ռեկտոր
ԵՂՅԱՆ Ռ.	ՌԱՎՎԻ Համալսարանի ռեկտոր
Մամուլի ներկայացուցիչներ	

“Սահմանադրություն և իրավունք” Երկրորդ օլիմպիադայի մրցույթի առաջին փուլի՝ բրեյնրինգի արդյունքները 2000թ.

Աշակերտական 14 մասնակից թիմերից բրեյնրինգում առավել բարձր միավորներով հետևյալ 6 խմբերը անցել են մրցույթի II փուլ.

1. **“Դավիթաշեն”**
2. **“Վարդանանք”**
3. **“Շիրակացու ճեմարան”**
4. **“Լոռի”**
5. **“Գոյամարտ” (Արցախ, Ստեփանակերտ)**
6. **“Վանաձոր” (Լոռու մարզ)**

Աշակերտական թիմեր

			դաս.	**դպրոց**
	Երևան			
	Դավիթաշեն			
1.	Իվանյան	Ստելլա		Թիվ 6 դպրոց
2.	Սահակյան	Հերմինե		Թիվ 6 դպրոց

3.	Բաբայան	Ալիկ		Թիվ 199 դպոց
4.	Բակլաչյան	Գոռ		Թիվ 199 դպոց
5.	Խաչատրյան	Եղիազար		Թիվ 199 դպոց
6.	Վարդանյան	Լիլիթ		Թիվ 199 դպոց
Ղեկ	**Սրապյան**	**Վաչագան**		

Վարդանանք

1.	Կարապետյան	Նորա (ավագ)	10-րդ	“Վարդանանց ասպետներ” կրթահամալիր
2.	Ստեփանյան	Հասմիկ	10-րդ	“Վարդանանց ասպետներ” կրթահամալիր
3.	Քալանթարյան	Անահիտ	10-րդ	“Վարդանանց ասպետներ” կրթահամալիր
4.	Սարուխանյան	Ալլա	10-րդ	“Վարդանանց ասպետներ” կրթահամալիր
5.	Ղազարյան	Էդգար	10-րդ	“Վարդանանց ասպետներ” կրթահամալիր
6.	Աֆրիկյան	Լուսինե	10-րդ	Թիվ 162 դպրոց
Ղեկ	**Բելլույան**	**Գեղեցիկ**		
Ուս.	**Մինասյան**	**Անահիտ**		

Էլիտա

1.	Ավագյան	Անի (ավագ)	9-րդ	Ռ. Սարգսյանի “Էլիտա” վարժարան
2.	Խաչատրյան	Արմենուհի	7-րդ	Ռ. Սարգսյանի “Էլիտա” վարժարան
3.	Սարգսյան	Աստղիկ	7-րդ	Ռ. Սարգսյանի “Էլիտա”

				վարժարան
4.	Թովմասյան	Անի	7-րդ	Ռ. Սարգսյանի “Էլիտա” վարժարան
5.	Խաչատրյան	Անի	9-րդ	Ռ. Սարգսյանի “Էլիտա” վարժարան
6.	Ներսիսյան	Հասմիկ	8-րդ	Ռ. Սարգսյանի “Էլիտա” վարժարան
Ղեկ	**Ղասումյան**	**Գայանե**		Ռ. Սարգսյանի “Էլիտա” վարժարան

Շիրակացու ճեմարան

1.	Մնացականյան	Տիգրան	10-դ	Շիրակացու ճեմարան
2.	Հակոբյան	Կարեն	9-րդ	Շիրակացու ճեմարան
3.	Ծառուկյան	Հայկ	10-րդ	Շիրակացու ճեմարան
4.	Սմբատյան	Սյուզաննա	9-րդ	Շիրակացու ճեմարան
5.	Մարտիրոսյան	Գևորգ	10-րդ	Շիրակացու ճեմարան
6.	Ազատյան	Արմինե	10-րդ	Շիրակացու ճեմարան
Ղեկ	**Ակոպովա**	**Լիլիթ**		

2.

Շենգավիթ

1.	Արշակյան	Արմենուհի	9-րդ	Թիվ 18 դպրոց
2.	Ասիլբեկյան	Գայանե	9-րդ	Թիվ 18 դպրոց
3.	Երիցյան	Տիգրան	9-րդ	Թիվ 18 դպրոց
4.	Տերտերյան	Ստելլա	10-րդ	Թիվ 6-րդ դպրոց
5.	Աբազյան	Կարեն	10-րդ	Թիվ 6-րդ դպրոց
6.	Սիմոնյան	Միեր	10-րդ	Թիվ 6-րդ դպրոց
Ղեկ	**Կարապետյան**	**Համլետ**		

Շիրակ

1.	Մնացականյան	Վարդան	9-րդ	Բալատոն վարժարան
2.	Պետրոսյան	Սեդա	9-րդ	Բալատոն վարժարան
3.	Հովհաննիսյան	Աննա	9-րդ	Բալատոն վարժարան
4.	Կուրղինյան	Հասմիկ	9-րդ	Բալատոն վարժարան
5.	Նալբանդյան	Լուսինե	9-րդ	Բալատոն վարժարան
6.	Պապիկյան	Անի	10-րդ	Բալատոն վարժարան
7.	Նիկոյան	Սամվել	9-րդ	Բալատոն վարժարան
Ղեկ	**Կիրակոսյան**	**Ռուզաննա**		

Արմավիր

1.	Մուրադյան	Սոնա	10-րդ	Մեծամորի թիվ2 միջն. դպ.
2.	Հովհաննիսյան	Դիաննա	10-րդ	Արմավիրի վարժարան
3.	Ալեքսանյան	Քրիստինե	10-րդ	Արմավիրի վարժարան
4.	Պետրոսյան	Արկադի	10-րդ	Մեծամորի թիվ2 միջն. դպ.
5.	Աղախանյան	Անի	9-րդ	գ. Ձերժինսկու միջն. դպրոց
6.	Արսենյան	Արմեն	9-րդ	գ. Ձերժինսկու միջն. դպրոց
Ղեկ.	**Մովսիսյան**	**Կարեն**		

Գեղարքունիք

1.	Շառոյան	Կամո	10-րդ	Գ. Վարդաձոր միջն դպրոց
2.	Դավթյան	Արմինե	9-րդ	Ք. Սևան թիվ 3 միջն դպրոց
3.	Իսոյան	Գոհար	9-րդ	Ք. Սևան թիվ 3 միջն դպրոց
4.	Հայրապետյան	Քրիստինե	10-րդ	Ք. Գավառ թիվ 1 միջն դպրոց
5.	Նադարյան	Նունե	10-րդ	Ք. Գավառ թիվ 1 միջն դպրոց
6.	Ավետիսյան	Մաքսիմ	10-րդ	Ք. Վարդաձորի միջն.

դպրոց

Ղեկ.	**Շառոյան**	**Շահեն**		
	Վայոց ձոր			
1.	Բաղդասարյան	Հայկանուշ	10-րդ	Վայքի թիվ1 դպրոց
2.	Հովսեփյան	Աշոտ	10-րդ	Վայքի թիվ1 դպրոց
3.	Ղազարյան	Մարինե	10-րդ	Եղեգնաձորի թիվ 1 դպրոց
4.	Ստեփանյան	Լևոն	10-րդ	Եղեգնաձորի թիվ 1 դպրոց
5.	Մկրտչյան	Հովիկ	10-րդ	Արենիի միջն դպրոց
6.	Ղարախանյան	Եվա	10-րդ	Արենիի միջն դպրոց
Ղեկ	**Դովլաթյան**	**Գնել**		
	Այրարատ (Արարատի մարզ)			
1.	Հակոբյան	Անուշ	10-րդ	Գ. Վանաշենի միջն. դպրոց
2.	Մակարյան	Գայանե	10-րդ	Գ. Վանաշենի միջն. դպրոց
3.	Ամիրջանյան	Թամարա	10-րդ	Գ. Վանաշենի միջն. դպրոց
4.	Մինասյան	Շողիկ	10-րդ	Գ. Վանաշենի միջն. դպրոց
5.	Մամյան	Իշխան	10-րդ	Գ. Վանաշենի միջն. դպրոց
6.	Ղազարյան	Սասուն	10-րդ	Գ. Վանաշենի միջն. դպրոց
Ղեկ	**Սահակյան**	**Կարեն**		
	Լոռի			
1.	Ղահրամյան	Մարիաննա	9-րդ	Վանաձորի թիվ 3 դպրոց
2.	Էվոյան	Շուշանիկ	9-րդ	Վանաձորի թիվ 10 դպրոց
3.	Այվազյան	Արմեն	9-րդ	Վանաձորի թիվ 20 դպրոց
4.	Հարությունյան	Հարություն	10-րդ	Վանաձորի թիվ 2 դպրոց
5.	Սարգսյան	Տաթև	10-րդ	Վանաձորի թիվ 1 վարժ.

6.	Խաչատրյան	Շուշան	10-րդ	Վանաձորի թիվ 1 վարժ
Ղեկ	**Սարդարյան**	**Ռուզաննա**		
Ղեկ	**Պապիկյան**	**Արայիկ**		

Աշտարակ
(Արագածոտնի մարզ)

1.	Կոջոյան	Հռիփսիմե	9-րդ	Աշտարակի թիվ 5 դպրոց
2.	Ավոյան	Սաթենիկ	9-րդ	Աշտարակի թիվ 5 դպրոց
3.	Գրիգորյան	Սաթիկ	9-րդ	Աշտարակի թիվ 5 դպրոց
4.	Պետրոսյան	Աննա	9-րդ	Աշտարակի թիվ 5 դպրոց
5.	Հարությունյան	Խանումիկ	9-րդ	Աշտարակի թիվ 5 դպրոց
6.	Ղևոնդյան	Էդգար	9-րդ	Աշտարակի թիվ 5 դպրոց
Ղեկ	**Մելիքյան**	**Արմեն**		

Գոյամարտ
(Արցախ, Ստեփանակերտ)

1.	Ղարաբեկյան	Իրինա	9-րդ	Ստեփանակ. թիվ 1 դպրոց
2.	Միքայելյան	Լուսինե	8-րդ	Ստեփանակ. թիվ 2 դպրոց
3.	Վարունց	Ալյոնա	9-րդ	Ստեփանակ. թիվ 5 դպրոց
4.	Հայրիյան	Նարինե	9-րդ	Ստեփանակ. թիվ 7 դպրոց
5.	Աբաղյան	Արմինե	10-րդ	Ստեփանակ. թիվ 10 դպրոց
6.	Գրիգորյան	Գեղամ	10-րդ	Ստեփանակ. Ար.Պ.Հ. վարժ.
Ղեկ	**Հայրիյան**	**Շահեն**		

Վանաձոր
(Լոռու մարզ)

1.	Ազարյան	Նարինե	10-րդ	Վանաձորի թիվ 1 վարժ.
2.	Դիլոյան	Լիանա	9-րդ	Վանաձորի թիվ 1 վարժ
3.	Եղյան	Տիգրան	9-րդ	Վանաձորի թիվ 5 դպրոց
4.	Սահակյան	Միեր	8-րդ	Վանաձորի թիվ 5 դպրոց
5.	Ադամյան	Արմինե	10-րդ	Վանաձորի թիվ 3 դպրոց

6. Քոչարյան Էդմոն 10-րդ Վանաձորի թիվ 8 դպրոց

Ղեկ Եղյան Ռոբերտ

“Սահմանադրություն և իրավունք” Երկրորդ օլիմպիադայի մրցույթի երկրորդ փուլի՝ դատավարության արդյունքները 2000թ.

Դատա-վարու-թյուն	Ուսանողական թիմ	Աշակերտական թիմեր	
		Դիմող կողմ	Պատասխանող կողմ
1	“Հրաչյա Աճառյան” համալսարան	“Գոյամարտ” (Արցախ, Ստեփանակերտ)	“Վանաձոր” (Լոռու մարզ)
2	“Իրավունք և օրինականություն” (ԵՊՀ)	“Վարդանանք”	“Լոռի”
3	“Նոր Գլաձոր” (Գլաձոր համալսարան)	“Շիրակացու ճեմարան”	“Դավիթաշեն”

Ուսանողական թիմեր

Արցախ

1. Մարջանյան Մարինե
2. Թադևոսյան Անատոլի
3. Խաչիկյան Գևորգ
4. Ավանեսյան Լուսինե
5. Սեյրանյան Ռուզաննա

Աճառյան համալսարան

1. Հակոբյան Լուսինե
2. Հովակիմյան Հռիփսիմե
3. Վարդանյան Շարմաղ
4. Բերբերյան Եվա

5. Գրիգորյան Հայկ

“Գալիք” համալսարան

1. Բաբուրյան Իսկուհի
2. Եսաֆյան Վիգեն
3. Կարապետյան Նաիրա
4. Շահնազարյան Միեր
5. Նազարյան Գնել

Նոր Գլաձոր (Գլաձոր կառավարման համալսարան)

1. Ալեքսանյան Կարեն
2. Աբրահամյան Կարինե
3. Հակոբյան Աղավնի
4. Միսկալյան Կամո
5. Խաչատրյան Նարինե

Էրեբունի (ԵՊՀ)

1. Մելիքյան Ռուբեն
2. Ադամյան Նատալյա
3. Թադևոսյան Օլիմպիա
4. Մելքոնյան Դավիթ
5. Գեղամյան Արտյոմ

Իրավունք և օրինականություն (ԵՊՀ)

1. Մալխասյան Արմեն
2. Թամրազյան Արարատ
3. Թաթոյան Արման

4. Փոլադյան Տիգրան
5. Գալստյան Արմեն

Սլավյանի (Երևանի ռուս-հայկական պետական համալսարան)

1. Սարգսյան Արմինե
2. Ղափլանյան Իրինա
3. Իսկանդարյան Կարինե
4. Առաքելյան Վարդան
5. Գվոզդև Գեռման

Հաղթող են հանդիսացել

Ուսանողական թիմ
“Իրավունք և օրինականություն”
Աշակերտական թիմեր
դիմող - **“Շիրակացու ճեմարան”**
պատասխանող - **“Վանաձոր”**

ՏՈՄՍԵՐ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18

ՏՈՄՍ 1.

1. Խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք ունեն՝
1) ՀՀ քաղաքացիները.
2) յուրաքանչյուր ոք.
3) Հայաստանի Հանրապետությունում մշտապես ապրող անձինք.
4) կուսակցությունները:

(1, հոդվ.26)

2. Հանրապետության Նախագահ ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է՝
1) թեկնածուների օգտին տրված ձայների կեսից ավելին.
2) քվեարկությանը մասնակցած ընտրողների ձայների մեծամասնությունը.
3) թեկնածուների օգտին տրված ձայների երկու երրորդը.

4) ընտրողների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը:

(1, հոդվ.51)

3. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունը նշանակվում է՝
1) օրենքով.
2) ՀՀ կառավարության որոշմամբ.
3) ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ.
4) Հանրապետության Նախագահի հրամանագրով:

(4, հոդվ.68)

4. Դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները կազմում է՝
1) ՀՀ վարչապետը.
2) ՀՀ Ազգային ժողովը.
3) ՀՀ արդարադատության նախարարը.
4) արդարադատության խորհուրդը:

(4, հոդվ.95)

1. Ե՞րբ և ինչպե՞ս է ընդունվել ՀՀ գործող Սահմանադրությունը և ի՞նչ է իրավական պետությունը:

ՏՈՄՍ 2.

1. Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է՝
1) ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով.
2) ազատ ընտրությունների և հանրաքվեների միջոցով.
3) ՀՀ Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի միջոցով.
4) ՀՀ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների միջոցով:

(1, հոդվ.2)

2. Առողջության պահպանման իրավունք ունեն՝
1) օտարերկրացիները.
2) ՀՀ քաղաքացիները.
3) յուրաքանչյուր ոք.
4) քաղքացիություն չունեցող անձինք:

(3, հոդվ. 34)

3. ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է՝
1) օրենքների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը.
2) օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների և Հանրապետության Նախագահի հրամանագրերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը.
3) օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը.
4) օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

(4, հոդվ.100)

4. Օրենքները հանրաքվեի են դրվում՝
1) Հանրապետության Նախագահի առաջարկով.
2) ՀՀ Ազգային ժողովի առաջարկով.
3) ՀՀ կառավարության առաջարկով.
4) ՀՀ Ազգային ժողովի կամ ՀՀ կառավարության առաջարկով:

(4, հոդվ.112)

1. Ի՞նչ է նշանակում "զսպումների և հակակշիռների" համակարգ:
Ո՞վքեր են իրար զսպում կամ հակակշռում:

ՏՈՄՍ 3.

1. Հանրապետության Նախագահն ընտրվում է՝
1) երեք տարի ժամկետով.
2) չորս տարի ժամկետով.
3) հինգ տարի ժամկետով.
4) վեց տարի ժամկետով:

(3, հոդվ. 50)

2. Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտիր նախագահի կողմից պաշտոն ստանձնելը, Հանրապետության Նախագահի պարտականությունները կատարում է՝
1) ՀՀ վարչապետը.
2) ՀՀ կառավարությունը.
3) ՀՀ Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ ՀՀ վարչապետը.

4) ՀՀ վարչապետը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ տարիքով ավագ պատգամավորը:

(3, հոդվ.60)

3. Արդարադատության խորհրդի դատախազ անդամների թեկնածություններն առաջադրում է՝
1) Հանրապետության Նախագահը.
2) ՀՀ գլխավոր դատախազը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ.
3) ՀՀ վարչապետը՝ ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությամբ.
4) ՀՀ գլխավոր դատախազը:

(4, հոդվ. 94)

4. ՀՀ Սահմանդրական դատարանի անդամն անփոփոխելի է և պաշտոնավարում է՝
1) ցմահ.
2) մինչև իր 65 տարին լրանալը.
3) մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը.
4) մինչև իր 70 տարին լրանալը:

(4, հոդվ.96)

1. Ո՞րոնք են ներպետական նորմատիվ ակտերի տեսակները և ինչու են այդ ակտերի հանդեպ օրենքներն օժտված գերակայության:

ՏՈՄՍ 4.

1. Նորընտիր ՀՀ Ազգային ժողովն ընտրությունից հետո չի կարող արձակվել՝
1) վեց ամսվա ընթացքում.
2) մեկ տարվա ընթացքում.
3) երկու տարվա ընթացքում.
4) ընդհանրապես:

(2, հոդվ.63)

2. Բժշկական օգնության և սպասարկման կարգը սահմանվում է՝
1) օրենքով.
2) Հանրապետության Նախագահի հրամանագրով.
3) ՀՀ կառավարության որոշմամբ.
4) ՀՀ վարչապետի որոշմամբ:

(1, հոդվ.34)

3. Համայնքներում իրականացվում է՝
1) պետական կառավարում.

2) տարածքային կառավարում.
3) տեղական ինքնակառավարում.
4) տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում:

(3, հոդվ. 105)

4. Հանրապետության Նախագահի հրաժարականն ընդունվում է՝
1) ՀՀ սահմանադրական դատարանի կողմից.
2) ՀՀ Ազգային ժողովի կողմից.
) ՀՀ սահմանադրական դատարանի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի առաջարկությամբ.
4) ՀՀ Ազգային ժողովի և կառավարության համատեղ նիստում:

(2, հոդվ. 58)

1. Ի՞նչ է նշանակում իշխանությունների տարանջատում, ում միջև է այն կատարվում:

ՏՈՄՍ 5.

1. Պատգամավորին չի կարելի կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել առանց՝
1) Հանրապետության Նախագահի թույլտվության.
2) ՀՀ Ազգային ժողովի համաձայնության.
3) ՀՀ գլխավոր դատախազի որոշման.
4) ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացության:

(2, հոդվ.66)

2. ՀՀ վարչապետին նշանակում է՝
1) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
2) Հանրապետության Նախագահը.
3) ՀՀ Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահը համատեղ.
4) ՀՀ վարչապետն ընտրվում է ՀՀ Ազգային ժողովի նիստում:

(2, հոդվ. 55)

3. Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը՝
1) հետադարձ ուժ ունի.
2) կարող է հետադարձ ուժ ունենալ Հանրապետության Նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերում.

3) կարող է հետադարձ ուժ ունենալ օրենքով նախատեսված դեպքերում.
4) հետադարձ ուժ չունի:

(4, հոդվ.42)

4. Համայնքի ղեկավարին օրենքով նախատեսված դեպքերում կարող են պաշտոնանկ անել՝
1) ՀՀ կառավարությունը՝ մարզպետի ներկայացմամբ.
2) Հանրապետության Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ.
3) տարածքային կառավարման նախարարը՝ համայնքի ավագանու ներկայացմամբ
4) ՀՀ վարչապետը՝ տարածքային կառավարման նախարարի ներկայացմամբ:

(1, հոդվ.109)

1. Ի՞նչով է պայմանավորված սահմանադրական իրավունքի առանձնահատուկ դերը իրավունքի համակարգում:

ՏՈՄՍ 6.

1. ՀՀ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են՝
1) ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով.
2) ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով.
3) ՀՀ Ազգային ժողովի որոշումներով.
4) ՀՀ Սահմանադրությամբ:

(4, հոդվ.62)

2. Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են՝
1) օրենքով.
2) Հանրապետության Նախագահի հրամանագրով.
3) ՀՀ կառավարության որոշմամբ.
4) ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ:

(1, հոդվ.30)

3. ՀՀ կառավարության ընդունած՝ օրենքի ուժ ունեցող որոշումներն ստորագրում է՝
1) ՀՀ Ազգային ժողովի նախագահը.
2) Հանրապետության Նախագահը.
3) ՀՀ վարչապետը.
4) ՀՀ Ազգային ժողովի նախագահը և ՀՀ վարչապետը:

(2, հոդվ. 78)

4. Վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահների թեկնածություններն առաջադրում է՝
1) ՀՀ Արդարադատության նախարարը.
2) ՀՀ Արդարադատության նախարարը ՀՀ Գլխավոր դատախազի հետ համատեղ.
3) դատարանների նախագահների խորհուրդը.
4) արդարադատության խորհուրդը:

(4, հոդվ. 95)

1. Ի՞նչ է "քաղաքացիությունը": Բացի քաղաքացիներից ո՞վ է բնակվում ՀՀ տարածքում:

ՏՈՄՍ 7.

1. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման կարգը սահմանվում է՝
1) Հանրապետության Նախագահի հրամանագրով.
2) կառավարության որոշմամբ.
3) օրենքով.
4) այլ իրավական ակտով:

(3, հոդվ.14)

2. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեն՝
1) ՀՀ քաղաքացիները.
2) քաղաքացիություն չունեցող անձինք.
3) յուրաքանչյուր ոք.
4) օտարերկրացիները:

(3, հոդվ.40)

3. Պատգամավորի լիազարությունների դադարման կարգը սահմանվում է՝
1) ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով.
2) Հանրապետության Նախագահի հրամանագրով.
3) ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ.
4) ՀՀ Սահմանադրությամբ:

(1, հոդվ.67)

4. ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացնելուց՝
1) ոչ շուտ, քան 12 և ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում.
2) ոչ շուտ, քան 24 և ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում.

3) ոչ շուտ, քան 36 և ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում.
4) ոչ շուտ, քան 48 և ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում:

(4, հոդվ. 74)

1. Ի՞նչ է նշանակում ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք:

ՏՈՄՍ 8.

1. ՀՀ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել՝

1) ՀՀ Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարվելուց հետո.
2) ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա.
3) Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց հետո.
4) Հանրաքվեով հաստատվելուց հետո:

(1, հոդվ.6)

2. Անվճար իրավաբանական օգնություն ցույց է տրվում՝

1) օրենքով նախատեսված դեպքերում.
2) Հանրապետության նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերում.
3) ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում.
4) փաստաբանների միության կանանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

(1, հոդվ.40)

3. Պատգամավորը չի կարող հետապնդվել՝

1) որևէ արարքի համար.
2) ոչ ծանր հանցագործությունների համար.
3) իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար.
4) իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում:

(4, հոդվ.66)

4. Կենտրոնական բանկի նախագահ և տեղակալ նշանակում է՝

1) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
2) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ.
3) ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ.
4) ՀՀ կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ:

(1, հոդվ.83)

1. Ի՞նչպիսի դատական համակարգ է նախատեսում ՀՀ Սահմանադրությունը:

ՏՈՄ 9.

1. ՀՀ վարչապետն ընդունում է՝
1) հրամանագրեր.
2) հրահանգներ.
3) կարգադրություններ.
4) որոշումներ.

(4,հոդվ.87)

2. ՀՀ Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու համար հանրաքվե նշանակում է՝
1) Հանրապետության Նախագահը.
2) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ կառավարության առաջարկով
3) ՀՀ Ազգային ժողովը.
4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնության առաջարկով կամ համաձայնությամբ:

(4, հոդվ.111)

3. ՀՀ կառավարությունն օրենքով նախատեսված դեպքերում կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին՝
1) ՀՀ վարչապետի ներկայացմամբ.
2) տարածքային կառավարման նախարարի ներկայացմամբ.
3) մարզպետի ներկայացմամբ.
4) համայնքի ավագանու ներկայացմամբ:

(3, հոդվ.109)

4. ՀՀ սահմանադրական դատարանն ընդունում է՝
1) վճիռներ և որոշումներ.
2) վճիռներ և եզրակացություններ.
3) դատավճիռներ և վճիռներ.
4) որոշումներ և եզրակացություններ:

(4, հոդվ.102)

1. Ի՞նչ մարմին է ՀՀ ազգային ժողովը և ի՞նչպես է այն կազմավորվում:

ՏՈՄ 10.

1. Տուժողին պատճառված վնասի հատուցումն ապահովվում է՝
1) օրենքով սահմանված կարգով.
2) դատավճիռով սահմանված կարգով.

3) տուժողի և մեղադրյալի համաձայնությամբ.
4) այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

(1, հոդվ.40)

2. Հանարպետության Նախագահը հրապարակում է՝
1) հրամանագրեր և կարգադրություններ.
2) հրամանագրեր և որոշումներ.
3) հրամաններ և կարգադրություններ.
4) հրահանգներ և հրամանագրեր:

(1, հոդվ.56)

3. ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում են՝
1) միայն օրենքով.
2) օրենքով և ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ.
3) ՀՀ կառավարության որոշմամբ.
4) ՀՀ վարչապետի ներկայացմամբ՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով:

(4, հոդվ.85)

4. ՀՀ սահմանադրական դատարանում որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ է մտնում՝
1) հրապարակումից հետո տասներորդ օրը.
2) ՀՀ պաշտանական տեղեկագրում հրապարակվելու պահից.
3) հրապարակման պահից.
4) մեկամսյա ժամկետում:

(3, հոդվ.102)

1. Ի՞նչ է քաղաքացիական իրավունակությունը և գործունակությունը: Ո՞րն է դրանց տարբերությունը:

ՏՈՄՍ 11.

1. Հանրապետության Նախագահը՝
1) օրենսդիր, գործադիր և դատական իշխանության բնականոն գործունեության ապահովողն է.
2) պետության գլուխն է.
3) գործադիր իշխանության ղեկավարն է.
4) պետության բարձրագույն պաշտոնատար անձն է:

(1, հոդվ.49)

2. Դատավորների և դատախազների պաշտոնեական պիտանիության ամենամյա ցուցակները կազմում են.

1) ՀՀ գլխավոր դատախազը.
2) ՀՀ արդարադատության նախարարը.
3) դատավորներինը՝ ՀՀ արդարադատության նախարարը, իսկ դատախազներինը՝ ՀՀ գլխավոր դատախազը
4) արդարադատության խորհուրդը:

(4, հոդվ. 95)

3. Մարզերում իրականացվում է՝

1) տեղական ինքնակառավարում.
2) պետական կառավարում և տեղական ինքնակառավարում.
3) պետական կառավարում.
4) տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում.

(3, հոդվ.107)

4. Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակում ընդգրկված քաղաքացիների՝

1) մեկ քարորդը.
2) մեկ երրորդը.
3) կեսը.
4) երկու երրորդը:

(2, հոդվ.113)

1. Սահմանադրական դատարանի տեղը և դերը պետական մարմինների համակարգում:

ՏՈՄՍ 12.

1. ՀՀ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում՝

1) պետական բյուջեի կատարման նկատմամբ.
2) պետական բյուջեի և օտարերկրյա պետություններից ստացվածփոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ.
3) պետական բյուջեի, օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ.
4) ՀՀ կառավարության կողմից օրենքների կատարման նկատմամբ:

(3, հոդվ.77)

2. Օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները վճռաբեկ դատարանում վերանայվում են՝
1) ՀՀ գլխավոր դատախազի բողոքների հիման վրա.
2) ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների բողոքների հիման վրա.
3) ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող ու վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա.
4) կողմերի և ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող ու վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա:

(3, հոդվ.93)

3. Դատախազությունը գործում է՝
1) ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում.
2) օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում.
3) ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում.
4) "ՀՀ դատախազության մասին" օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

(3, հոդվ.103)

4. ՀՀ քաղքացիություն շնորհում է՝
1) ՀՀ վարչապետը.
2) ՀՀ Ազգային ժողովը.
3) Հանրապետության Նախագահը.
4) Հանրապետության Նախագահը վարչապետի ներկայացմամբ:

(3, հոդվ.55)

1. Ի՞նչ իրավունքներ ունի սեփականատերը:

ՏՈՄ 13.

1. Հայաստանի Հանրապետությունը՝
1) ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է.
2) ինքնաիշխան և ժողովրդավարական պետություն է.
3) սոցիալական և իրավական պետություն է.
4) անկախ, ինքնիշխան և ժողովրդավարական պետություն է:

(1, հոդվ.1)

2. Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է՝

1) ընտրվելու պահից.
2) ընտրվելուց 40 օր հետո.
3) ՀՀ Ազգային ժողովի նիստում՝ ժողովրդին տրված երդմամբ.
4) ՀՀ կառավարությունը կազմավորելուց հետո:

(3, հոդվ. 54)

3. ՀՀ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնվելու դեպքում Հանրապետության Նախագահը՝
1) ընդունում է կառավարության հրաժարականը.
2) արձակում է ՀՀ Ազգային ժողովը.
3) ընդունում է կառավարության հրաժարականը, նշանակում վարչապետ և կազմավորում կառավարություն.
4) կազմավորում է նոր կառավարություն:

(3, հոդվ.55)

4. Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն Ազգային ժողովի կողմից չհաստատվելու դեպքում ծախսերը՝
1) կատարվում են կառավարության որոշմամբ.
2) կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով.
3) սառեցվում են.
4) հաստատում է Հանրապետության Նախագահը:

(2, հոդվ.76)

1. Ի՞նչ է հանցագործությունը:

ՏՈՄ 14.

1. Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն՝
1) յուրաքանչյուր ոք.
2) ՀՀ քաղաքացիները.
3) օտարերկրացիները.
4) քաղաքացիություն չունեցող անձինք:

(2, հոդվ.27)

2. Իր կարծիքը պնդելու իրավունք ունի.
1) քաղաքացիություն չունեցող անձը.
2) յուրաքանչյուր ոք.
3) օտարերկրացին.
4) ՀՀ քաղաքացին:

(2, հոդվ.24)

3. ՀՀ Ազգային ժողովն Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահ է նշանակում՝
1) ՀՀ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ.
2) Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
3) ՀՀ կառավարության առաջարկությամբ.
4) ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկությամբ:

(1, հոդվ.83)

4. Դատավորների ընդհանուր ժողովներն արդարադատության խորհրդի անդամի յուրաքանչյուր տեղի համար առաջադրում են՝
1) մեկ թեկնածու.
2) երկուական թեկնածու.
3) երեքական թեկնածու.
4) հինգական թեկնածու.

(3, հոդվ.94)

1. Ի՞նչ է պատիժը: Ո՞րոնքն են պատժի նպատակները:

ՏՈՄՍ 15.

1. Դեսպաններին նշանակում է՝
1) ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ.
2) ՀՀ Ազգային ժողովը.
3) Հանրապետության Նախագահը.
4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարաչապետի ներկայացմամբ:

(3 հոդվ.55)

2. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝
1) օրենքով.
2) ՀՀ կառավարության որոշմամբ.
3) նորմատիվ իրավական ակտերով.
4) Հանրապետության Նախագահի հրամանագրերով:

(1, հոդվ.36)

3. ՀՀ Սահմանադրական դատարան կարող են դիմել՝
1) Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը.
2) Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը, ինչպես նաև Հանրապետության Նախագահի թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով.
3) Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը,

ինչպես նաև Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, ՀՀ կառավարությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում.
4) ՀՀ քաղաքացիները:

(3, հոդվ.101)

4. Դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցեր քննելիս արդարադատության խորհրդի նիստերը վարում է՝
1) Հանրապետության նախագահը.
2) ՀՀ արդարադատության նախարարը.
3) վճռաբեկ դատարանի նախագահը.
4) ՀՀ Սահամանադրական դատարանի նախագահը:

(3, հոդվ.95)

1. Ի՞նչ է միջազգային իրավունքը, միջազգային իրավունքի սուբյեկտները:

ՏՈՄ 16.

1. Մտքի, խղճի և դավանանքի ազատաության իրավունք ունեն՝
1) ՀՀ քաղաքացիները.
2) օտարերկրացիները.
3) քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ.23)

2. Դատապարտյալներին ներում շնորհում է՝
1) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
2) ՀՀ վարչապետը.
3) Հանարապետության Նախագահը.
4) Հանարապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ:

(3, հոդվ.55)

3. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են՝
1) միայն դատարանները.
2) դատարանները և ՀՀ արդարադատության նախարարությունը.
3) դատարանները և դատախազությունը.
4) դատարանները և ՀՀ արդարադատության խորհուրդը:

(1, հոդվ.91)

4. Տեղական տուրքեր և վճարներ սահմանում է՝
1) համայնքի ղեկավարը.
2) մարզպետը.
3) ՀՀ կառավարությունը.
4) համայնքի ավագանին:

(4, հոդվ.106)

1. Ո՞րոնք են Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր մարմինները: Ե՞րբ Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի անդամ: (1992թ. մարտի 2)

ՏՈՄՍ 17.

1. Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք ունեն՝
1) ՀՀ քաղաքացիները.
2) օտարերկրացիները.
3) քաղաքացիություն չունեցող անձինք.
4) յուրաքանչյուր ոք:

(4, հոդվ.22)

2. Նորընտիր ՀՀ Ազգային ժողովը կազմված է լինելու՝
1) 150 պատգամավորից.
2) 131 պատգամավորից.
3) 190 պատգամավորից.
4) 60 պատգամավորից:

(2, հոդվ.63)

3. Դատավորը պաշտոնավարում է՝
1) ցմահ.
2) մինչև իր 65 տարին լրանալը.
3) մինչև կենսաթոշակային տարիքին հասնելը.
4) մինչև իր 70 տարին լրանալը.

(2, հոդվ.96)

4. Տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են՝
1) անժամկետ.
2) երեք տարի ժամկետով.
3) հինգ տարի ժամկետով.
4) համայնքի բնակչության կողմից սահմանված ժամկետով:

(2, հոդվ.105)

1. Ի՞նչ ենք հասկանում պետության ձև ասելով և ո՞րոնք են դրա տարրերը:

ՏՈՄՍ 18.

1. Հողի նկատմամբ սեփականության իրավունք ունեն՝

1) քաղաքացիություն չունեցող անձինք.
2) յուրաքանչյուր ոք.
3) օտարերկրացիները.
4) ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքավցիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ օրենքով նախատեսված դեպքերում:

(4, հոդվ.28)

2. Պատերազմ հայտարարում են՝

1) ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
2) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի համաձայնությամբ.
3) ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ.
4) Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

(1, հոդվ.81)

3. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝

1) գյուղերն ու քաղաքները.
2) մարզերն ու քաղաքաները.
3) համայնքները և Երևան քաղաքը.
4) մարզերը և համայնքները:

(4, հոդվ.104)

4. ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարվում են՝

1) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնության.
2) հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ ՀՀ Ազգային ժողովի նախաձեռնությամբ.
3) Հանրապետության Նախագահի առաջարկության հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից.
4) ՀՀ Ազգային ժողովի կամ Հանրապետության Նախագահի նախաձեռնությամբ՝ Սահմանադիր ժողովի կողմից:

(2, հոդվ.111)

1. Մեկնաբանեք բնական իրավունքի տեսության հիմնական սկզբունքները:

ՎԻՐՏՈՒԱԼ ՕՐԵՆՔՆԵՐ

“Անձնական իրավունքների եւ ազատությունների մասին”ՀՀ օրենք
“Քաղաքական իրավունքների մասին” ՀՀ օրենք
“Ամուսնության եւ ընտանիքի մասին” ՀՀ օրենք
“ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ” ՀՀ օրենք
“Դատարանակազմության մասին” ՀՀ օրենք
“Կրթության եւ գիտության մասին” ՀՀ օրենք
ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք
“Երեխայի իրավունքի մասին” ՀՀ օրենք
“Պաշտպանության մասին” ՀՀ օրենք
“Կառավարության մասին” ՀՀ օրենք
“Ընտրությունների մասին” ՀՀ օրենք
“Հանրաքվեի մասին” ՀՀ օրենք

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ. Հարությունյան, Վ. Ստեփանյան, Վ. Հովհաննիսյան ”Սահմանադրական վերահսկողություն” (ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար), Երևան, “Նժար”, 1997, 128 էջ
2. “Պետություն և իրավունքի հիմունքներ” (դասագիրք հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար)/ Գ. Ղազինյանի և Ռ. Պետրոսյանի խմբագրությամբ. Երևան, “Լույս”, 1998, 336 էջ
3. Հ. Խաչատրյան, Հ. Ստեփանյան ”Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը”, Երևան, “Նժար”, 1997, 80 էջ
4. “Պետության և իրավունքի հիմունքներ” / Վ. Ստեփանյանի խմբագրությամբ, Երևան, “Նժար”, 1997, 88 էջ

Լուսանկարներ

ԱԱՀԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ



VERS

VERSUS